ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ ԹԻՒ Գ. **1870** ՅՈՒԼԻՍ

# ԿՐՕՆԱԿԱՆ.

## ՃԱՌ

Ներբողեան՝ պատմագրութեան՝ խորհրդական խմբագրեալ յարմարեալ Հրեշտակաց ի Մեծիմաստ Վարդապետէն Վարդանայ՝ յերկրորդ երանելւոյ Պարթևն Գրիգորի Լուսաւորչին Հայաստան աշխարհին.

(Շարունակութիւն տե՛ս Թիւ Բ.)

Իսկ Սուրբն եղբայր Գրիգորի՝ 'ի խուճապէ տագնապէ հօրն չարամահ սպանմանն անկանի 'ի Պարսս, և անտի առ փեսայն իւր՝ Թագաւորն Հեփթաղաց. Սնանի անդ և յաջողակ այր եղեալ, և անուանի այնչափ, մինչև տանել զնա և թագաւորեցուցանել 'ի վերայ Ճենաց և Դարպանաց և ամենայն կողմանցն այնոցիկ. Իսկ Տրդատիոս յառաջին ամին իւրոյ թագաւորութեան տեղեկացեալ վասն Գրիգորի՝ եթէ զանտեսն Աստուած փառաւորէ, և սկսաւ չարչարել զնա, եւ առաւել յորժամ իշխանն Օտայ և Տաճատ աներ նորա՝ ասացին արքային, թէ՝ որդի Անակայ է դա, որ խաւար էած աշխարհիս Հայոց՝ սպանանելով զհայրն քո Խոսրով. Զոր լուեալ արքային՝ ետ տանել 'ի բանտ Վիրապին. և յուսահատ եղեալ 'ի լողութենէ նորա, յորժամ ապրեալ 'ի Տեսչութենէն Աստուծոյ, և 'ի հարուածս թագաւորին և արքունական զօրացն՝ ելեալ 'ի Վիրապէ ապրեցուցանէր զսպանողս իւր՝ փրկական Աւետարանաւն և բժշկական շնորհօքն Քրիստոսի. Եւ ապա պերճ և պայծառ Նախարարօք և արքունական կառօք 'ի Կեսարիայ երթեալ՝ 'ի Մայրաքաղաքն Կապադովկեցւոց, և մայրն հիմնարկութեան հաւատոյ Հայաստանեայցս 'ի Թադէոսէ Առաքելոյ, ուր արար զառաջին ձեռնադրութիւն և զհիմնարկութիւն Եկեղեցւոյ. Եւ երթեալ առնոյր զառաքելական պատիւ յԱռաքելական Հօրէն Ղևոնդեայ. զի իցէ իրքն կարգաւոր և Աստուածագործ հրաշ. քանզի որ շիրմօք նորա յղացաւ և էառ սկիզբն գոյութեան, 'ի նորայն խնամոց ածաւ 'ի տեղի առաջին շնորհաբաշխութեան նո-

րա, և ընկալաւ 'ի Նմանէ զսկիզբն գոյութեան ըստ Աստուծոյ։ Յառաջին աթոռ Նորա, ուր զՏիոփիլոս Զ. Եպիսկոպոս ձեռնադրեաց սուրբն Թադէոս, և 'ի նոյն աթոռ՝ ուր ընկալաւ զշնորհս աւազանին 'ի Կեսարիայ, այժմ էառ զամենակատար ծնունդն և զբովանդակ շնորհս առաքելութեան, որով պայծառացեալ դառնայ 'ի Նորին առաքելական անդաստանն և ինքեան. և Նորայն վաստակօք հերկեալ և արեամբ և արտասուօք սերմանեալ և քրտամբ ոռոգեալ, վասնորոյ և արդէն իսկ սպիտակացեալ և հունձս հասեալ՝ զոր և տեսեալ բերկրալի սրտիւ զհամօրեական տեսիլն՝ և Թեքեալ զմանգաղ բանին 'ի մուխ հոգւոյն, սկսանէր 'ի հաճ արտոյ ագարակին՝ և դնել լիաբուռն խրցունս որայից և բարդից արժանաւոր լայնանիստ կալոյն և բազմատար շտեմարանոյն վերնոյ, զի հասարակ ցնծասցեն սերմանողքն առաջին՝ Բարդուղիմէոս և Թադէոս, և վերջին հնձողքն և շտեմարանողքն Գրիգորիոս և որդիքն իւր քաջագործք։ Եւ արդ ահա խորհուրդ երկուց գաւազանաց յայտնեցան, և առ մեզ արմատացան՝ որք 'ի քաղցրաբեր արմատոցն և 'ի դառնաբեր ստոց եկն։ Նոքա շառաւիղքն Աբրահամու օտարացան, և օտար անուամբ կոչեցան՝ Սոդոմայ և Գոմորայ իշխանք և' ժողովուրդք և' տունկք և' ուռք փշաբերք և տատասկածնունդք։ Եւ այժմ դարձեալ՝ վերնական գթութեամբ հաստատեցան 'ի բունն իւրեանց, և սկիզբն արմատոցն յԱբրահամեան հաւատն՝ որով ամենքեան ապրեցաք։ Առցես ասէ Տէր ցԶաքարիայ, երկուս գաւազանս, և զմին կոչեսցես վիճակս, և զմիւսն գեղեցիկս, և նոքօք դարձուցես առ իս զիշխանս իմ. որ և աստ կատարեցաւ 'ի Տրդատէս՝ որ գեղեցկացաւն զՔրիստոս զգենլով՝ 'ի բաց եդեալ զխոզենին, և 'ի սուրբ Գրիգորիոս, որ վիճակք եղեն Նմա ընտիր ընտիրս յառաքեալսն մեր։ Եւ վիճակեցան Նմա Զ.Ճ. և քսան գաւառք, և ժառանգութիւն նմա հաճոյ եղև անհաճոյն յառաջագոյն։ Արդ Նախ 'ի ձեռացն Քրիստոսի ընկեցաւ գաւազան վիճակ Գրիգորի՝ չարչարանս տուեալ. և ապա գեղեցկացեալն Տրդատ՝ 'ի նոյն ձեռաց Հզօրին Յիսուսի հովուին քաջի, որ 'ի փախչելն արիանան առաջի խնամողացն, որպէս զգաւազանն ձգելով զկնի փախուցեալ ոչխարին՝ դարձուցանէ առ ընկերսն, զի մի գայլոց և գազանաց լիցի։ Նոյնպէս արարեալ՝ Թէ բովանդակ հօտն 'ի փարախէն, և կամ 'ի խոտաւէտ տեղեաց՝ հեռանայցեն։ Դարձեալ ասէր Ադոնայ Տէր ցԵզեկիէլ. "Առ երկու գաւազանս և միաւորեա ընդ միմեանս, և եղիցի մի, և կալ 'ի ձեռին քում". որ նշանակէր զմիաւորիլ երկու իշխանութեան Թագաւորութեանն տանն Յուդայի և Եփրեմի և Զօրաբաբէլի Թագաւորի և Քահանայապետին Յեսուայ։ Որ և մերոյս առաւել խորհրդածի՝ կարի հեռացելոցս 'ի միմեանց. որ և միաւորեալ հաւատով և կամօք և իշխանութեամբ եղև 'ի ձեռն Քրիստոսի, որում նուիրեցանն։ Դարձեալ գաւազանն ընկուզի՝ զոր տեսանէր մանուկն Երեմիայ. որ և զմեր խրատս առակաբանէր. զի հարկանէր հայր զորդի գաւազանաւ խրատու՝ որ դառն է արմատն, և քաղցր է պտուղն՝ որպէս ընկուզի, որոյ դառն է բոլոր տունկն, այլ՝ պտուականն է վասն պարարտութեան ընկուզին։ Եւ այլ օձացեալ գաւազան և հաստատեալն իւրում բնութեամբ առ Մովսէսիւ, զԹագաւորն մեր նշանակէր կերպափոխեալ 'ի փախչելի տեսակ. և բուռըն հարեալ զնմանէ մերոյս Մովսէսի, առնոյր զբնիկն իւր. և կայր մնայր նեցուկ հեզութեան 'ի ձեռին Նորա։ Իմաստունն մեր և քաջ հովիւն Գրիգորիոս, զոր խոստացաւ Տէրն կանխագոյն 'ի ձեռն մարգարէիցն. "Յարուցից ձեզ հովիւ իմաստուն՝ որ երկուս ունի գաւազանս, զմինն բարակ՝ որով զխաշինսն արածէ, և զմիւսն հաստագոյն և ստուար՝ որով ընդ գայլսն և ընդ գազանսն կռուի։ Որ և ճշմարտապէս մեր կայ հանճարեղն և իմաստուն հովիւն Գրիգորիոս ունելով զերկոսեանն. գաւազան կակղագոյն և բարակ՝ զբանն հեզահամբոյր դարձուցիչ և տածիչ և օծող բանաւորն հօտի. իսկ գաւազան անվանելի և քաջամարտիկն ունէր 'ի պատրաստի, զՏրդատիոս՝ որով հարկանէր զգլխաւորձն փրկութեանն իւրեանց, որպէս զԴեմետրիանոս և զԴեսանայսն և Դողս և զԴանս օտարոտիս սատակէր։ Որպէս զանարի հսկայն զԹագաւորն հիւսիսոյ զԴեղոնհան, զոր աղօթիւք 'ի ձեռն Նորա շնչաւորի ճեղքէր ընդ մէջ երիվարաւն հանդերձ՝ մինչև ցգետինն Յեսուաբար՝ մերոյ Մովսէսի տարածեալ զբազուկս ընդ Ամա-

զենկայ. և ոչ միայն այս, այլ և զՇնորհս լերինն Սինեայ և Քորեբայ՝ 'ի լերինս և 'ի դաշտս Արարատու ածեալ փառազարդէր։ Սիւն ամպեղէն և հրեղէն 'ի վայր իջեալ արկանէր խորան լուսեղէն ծիրանափառ կազմեալ նշանօք կամարազարդ պսակեալ հրաշիւք երկնակառոյց շողով 'ի ձեռն երկնայնոց երևեալ. որք իջեալ բազմութիւնք հրաբուն զօրայն լուսին զատորին աշխարհս՝ նոր երկին զսա հրաշագործեալ, նախնին մեր և Հօյլին Գրիգորիոս, նոր Յակոբ, որ տեսլեամբ և իջմամբ Միածնին 'ի բարձանց յարափոխեալ կոչեցաւ Իսրայէլ. Յոր 'ի մէջս և 'ի գլուխս երկուց գետոց Տիգրիս և Եփրատէս, եկեալ խօսէր հարսն, ոչ ննջեանն, այլ սիրովիլեցն արքայինն և երկս զաւազանօք ընկուզի և սօսի, և եղև անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ՝ եփց անձանց և մի իշխանութեանն. ծնանէր 'ի ջուրս աւազանին, նկարէնս և խայտախարխս զառինս, և զոշտայիտակն մաքիս, և 'ի սևադէմ և 'ի գայլակերպ զազանաձև ազգաց, որք անցեալ ընդ գետ կենդանիս, սպիտակափայլ ռնկիակիցն նշդպազարդ գեղապաճոյճս փայլէին։

Որ 'ի միում աւուր հնգետասան բիւրս 'ի յարքունական զօրացն՝ Քրիստոսազգեստէր նորն մեր Յեսու Յովսէփեան, Քաջանայն մեծն Գրիգորիոս. որ զգեցաւ զպատմուճան պճղնաւոր, 'ի փառս և 'ի պատիւ պսակեալ 'ի Թերթնոսկի և 'ի խոյրն սուրբ՝ Առաջնորդէր Զօրաբարէլին նորոյ, Բարեփառն Տրդատայ, և զերեացաւ արձ ժողովրդեանն. որով աւերէր Բարելոն, խառնակութեան վարք՝ Կործանէր Բարէլ. խորտակէր Դագոն. մնաւանէր Զևս 'ի կզզիս արգելեալ. շանդակէր լինէր Ասկլեպիոս, Արամազդ և Արես. առեալ զփառս իւրեանց զիմէին յանդունդս. Աստղիկ զբողութիւն առեալ փախչէր առ հօմանիս իւր։ Տունն Հայկայ, տուն Աստուծոյ բարձրանայր։ Գեղեցկանայր ազգն Գեղամայ. կողմն Իսակայ սիրելի Քրիստոսի լինէր. ազգն Արամայ զարմանալի փառաց հասանէր։ Ազգն Ասքանազեան՝ և Արարատեան Թագաւորութիւն բարձրացեալ քան զազգս բազումս՝ զերկին և զարքայութիւն երկնից ժառանգեցին։ Բա՜ց բազկին բարձրեալ. փառք ձեռին կարկառելոյ. զօրութիւն տուողին արժանացելոյ. զոհութիւն մի՛նորդին պատրաստեալ. օրհնութիւն անզանգին սրբեցելոյ. շնորհք պարգևողին մեծացելոյ. բարերարութիւն կամացն քաղցրացելոյ. երկրպագութիւն երկրամերձ զխնօք անխիշաւոր ողորմութեանն հաշտեցելոյ և անմոռաց պահողին զիշատակս իւրոյ վաստակաւորին։ Քանզի որպէս առաւել վաստակեցաւ հայրն մեր՝ և աստուածանման ծնողն մեր Գրիգորիոս՝ քան զամենայն մնեղի տարեալ լրջմտութեամբ զոսկալի և զքաղցրաչի կիրս չարչարանաց նոյնքանեաց։ փառաց և շնորհաց եղև արժանաւոր. և երկնից հոգեպէս և մարմնաչարչար զամս բազումս. և այս 'ի վայրկենի միում ծնանի ազգ մի ողջոյն միանգամայն զլուսաւոր բանակս Հայկազնեայ զարմից պտուղ հիահրաշս իւրոցն տաժանաչաւ կրիցն անհանդուրժականացն. որ յայնժամ հիացոյց զտեսողսն, որ ոչ միայն երկրաւորս, այլ և զերկնայինսն և զերկրաւորսն ամենայն. և այժմ քաջանեցուցեալ դողացուցանէ լուրն զխորհուրդս և զմարմինս լսողաց։

(Շարունակելի)

## ԱՌԱՋԻՆ ԴԱՐԵՐՈՒ ԿՐՕՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն և վերջաւորութիւն Ա. Բ.

Վանքերուն կարեւորութիւնը աչքի չերեւելուն մեծ պատճառն աս է՝ որ ընդհանուր կերպով նոյն խմ կրօնաւորաց աչքէն ելած է. և ժողովուրդը, որուն համար դիւրին բան չէ որ նեկեղեցւոյ մէջ տարբեր տեսակ կարգութեանց տարբերը անէ, մէջէն անգամ չկրնար անցունել՝ թէ վանք ըսուածը կրօնաւորաց նաւահանգիստն է՝ թէ միայն սովորական ունեառնեցնելու մը։ Ինչպէս կրնար ասիկա ժողովուրդը հասկնալ, երբ վանքի երեսը չտեսած կրօնաւորներ ամեն տեղ կըպտտին։ Ինչպէս կրնար ասիկա ժողովուրդը հասկանալ՝ քանի որ վանքերը ու-